
ԳԱՆՁԱԿԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆԻ
ԳՐԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ

ՍՎԵՏԼԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Երվանդ Լալայանը Հայաստանի յուրաքանչյուր տարածաշրջանի բանահյուսական, ազգագրական նկարագիրը կուռ և ամբողջական ներկայացնելու նպատակով, գիտաճանաչողական նկատառումներից ելնելով, ի սկզբանե, անդրադարձել է պատմագիտական, տեղագրական, բնակչիմայական, ինչպես նաև ազգաբնակչության էթնիկական կազմի, կրթական մակարդակի, հոգևոր ու նյութական մշակութային արժեքների բացահայտումներին: Նման մոտեցումը պայմանավորված էր ազգային ինքնաճանաչման, հասարակության լայն շերտերին իր իսկ ստեղծած հոգևոր մշակութային արժեքներին մերձեցնելու, ճանաչելի դարձնելու, ինքնությունը իմաստավորելու և ինքնահաստատելու կարևորության գիտակցմամբ:

«Ջավախքից» և «Վարանդայից» հետո Ե. Լալայանը ձեռնամուխ է լինում Գանձակի գավառի բանահյուսական և ազգագրական նյութերի գրառմանն ու լույսընծայմանը: Նյութերը հրատարակվել են 1900 թ. «Ազգագրական հանդեսի» Զ գրքում: Այն բաղկացած է մի շարք բաժիններից ու ենթաբաժիններից: «Պատմական համառոտ պատմություն» խորագրի ներքո նա ներկայացրել է Ուսոյաց աշխարհի Շակաշեն, Գարդման և Արցախի Փառիսոս գավառների վերաբերյալ պատմագիտական կարևորություն ներկայացնող վկայություններ: Շակաշեն անվան շուրջ շրջանառվել են հետևյալ կարծիքները: Ե. Լալայանը վկայակոչում է Մովսես Խորենացուն, ըստ որի՝ Շակաշեն գավառն անվանվել է նաև Շիկաշեն¹: Կադանկատվացին մի տեղ այն անվանում է Շակաշեն, մեկ այլ տեղ՝ Արշակաշեն²: Ե. Լալայանի հավաստմամբ՝ ճիշտը Շակաշենն է: Նման մոտեցումը նա պայմանավորում է հետևյալ հանգամանքով. «Հավանաբար այն ծագած պիտի լիներ Սագասինի անունից, Սկյութական Սագ ցեղի անունով, որն ըստ Ստրաբոնի, արշավելով Հայաստան, տիրեց հիշյալ գավառին»³: Գավառի ամենանշանավոր քաղաքը եղել է Գանձակը:

Հայտնի է, որ Գանձակը եղել է մելիքանիստ գավառ: Այնտեղ էին բնակվում Մելիք-Բեկլարյանը, Մելիք-Մնացականյանը, Մելիք-Շահնագարյանը, Մելիք-Ռոստոմյանը: Մելիք-Բեկլարյանը տիրում էր Գյուլիստանի մահալին, որը մտնում էր Ղարաբաղի խա-

¹ Մ. Խորենացի. Մատենագրությունք, Վենետիկ, 1865, էջ 610:

² Մ. Կադանկատվացի. Պատմություն Աղվանից աշխարհի, Մոսկվա, 1860, էջ 251:

³ Ե. Լալայան. Երկեր, հ. 2, Երևան, 1988, էջ 203:

նության մեջ: Այդ մեղիքությունը Խամսայի հինգ մեղիքություններից մեկն էր: Այն սկզբում բոլորովին անկախ էր, իսկ հետագայում ենթարկվել է Գանձակի խանությանը: Ազգագրական-բանահյուսական գրառումներում աչքի են ընկնում մեղիքական գերդաստանների կյանքի ու կենցաղի, նրանց ապրած ժամանակաշրջանի, ժողովրդի հետ ունեցած փոխհարաբերությունների վերաբերյալ ուշագրավ վկայություններ: Հավաքությոններում գինի խմելիս, ժողովուրդն առաջին բաժակը բարձրացնում էր Մեղիքի պատվին՝ հետևյալ աղոթքը հղելով նրան. «Մեղիքի մի օրը՝ հազար»: Մեղիքները մասնակցում էին ժողովրդի թե՛ տխրությանը, թե՛ ուրախությանը: Երբ Մեղիքներից մեկը վախճանվում էր, ժողովուրդը մեծ շուքով էր ճանապարհում նրան մինչև գերեզման: Երբ «գանձ» էին ասում, բոլորն աշխատում էին խաչհամբույր ձգել՝ դրանով արտահայտելով իրենց սերն ու հարգանքը հանգուցյալ Մեղիքի հանդեպ:

Ե. Լալայանը ամենայն մանրամասնությամբ է անդրադարձել ազգաբնակչության էթնիկական կազմի վերհանմանը: Հետազոտական նախնական ուսումնասիրություններից պարզվել էր, որ Գանձակի գավառի հիմնական կազմը բնիկներն էին, իսկ նվազագույնը գաղթականներ՝ Պարսկաստանից, Ջիվանշիրից, Երևանից, Ղազախի տարածաշրջաններից: Հետագայում նրա կողմից իրականացված մանրագնին հետազոտությունները բացահայտել են, որ հիշյալ տարածաշրջանում իրականացվել են ներէթնիկ այլ տեղաշարժեր ևս: Գրառումներում նա հանգամանորեն նշում է գաղթի ժամանակաշրջանը, տեղավայրը, ազգաբնակչության թվաքանակն ու այլ տվյալներ: Գաղթն ի դեպ, տեղի է ունեցել 1828 թ.: Բնակիչները գաղթել են հիմնականում Ատրպատականի Ղարադաղից, Ուտիքի Առանձնակի Սարով գյուղից, Խոյից: Բանանց կամ Բայան գյուղի բնակիչները մեծ մասամբ բնիկներ էին: Հիշյալ գյուղից հիշատակվում են բժիշկ Տեր-Միքայելյանը, իրավաբան Հովհաննես Տեր-Իսրայելյանը, Ստեփան Տեր-Ավետիքյանը, որոնք հայտնի էին գյուղի մասին գրած կենցաղապատկերներով: Չովդար և Հարց հանգիստ գյուղի բնակիչները գաղթել են Հին և Նոր Ճաթղոսան և Ճովիզ, Միսկինլուի բնակչությունը՝ Ղարաքյանդ կամ Փառիսոս գյուղերից: Փառիսոս գյուղը հիմնադրողի վերաբերյալ չկա ոչ մի հիշատակություն: Հայտնի է միայն, որ մեծն Սյունյաց Սենեքերիմ թագավորը պայծառեցրել է քաղաքը եկեղեցիներով և բերդով՝ այն կոչելով՝ «Թագավոր Փառիսոսի»: Նշանավոր գյուղերից հիշատակվում է Չարդախլուն: Այն գտնվում է մի առավակի հովտում: Ըստ ավանդության, «Հովիտը փոքր առ փոքր բարձրանալով, ընդհարվել է չորս լեռների, որի պատճառով էլ գյուղը կոչվել է Չարդախլու, այսինքն՝ «Չհար Ղաղլու» (չորս լեռնանի)»⁴: Բնակիչները հիմնականում Թիֆլիսի Հավլաբարից 1823 թ. գաղթած, ծագումով երևանցիներ էին, մասամբ նաև՝ Ղարադաղից և Պարսկաստանից գաղթականներ: Հայ Գետաբեկի կամ Ղազախի բնակիչները վերաբնակվել են հին Գետաբեկից վերաբնակիչները Ղազախի Կոթ, Ոսկեպարիսպ, Ղալաչա գյուղերից էին⁵: Շիա աղան-

⁴ Ե. Լալայան. նշվ. աշխ., էջ 311:

⁵ Տե՛ս նույն տեղում:

դին պատկանող մահմեդականները բնակվում էին հիմնականում Ամիրվար, Աջի, Բիրգյոզ, Այքենդ, Դաստաֆոր, Դամչալի, Գյունե Դամի, Ջազա Դարասի, Ղարաբուլաղ, Ղազախ և Էլչիլախ գյուղերում⁶:

Նշանավոր վանքերից հիշատակվում են Չարեքա անապատի, Ս. Թարգմանչաց վանքի, Թարգմանչաց անապատի, Հրեշտակապետաց, Ծաղկավանքի, Օխտը եղցի կամ Քարահերձի, Սլզնաբերդի և Մաճնաբերդի, Կարմիր եկեղեցու կամ Հոռոմաշենի, Քարխանավանքի, Խունիսավանքի, Սուրբ Սարգիս վանքի, Գյուլիստանի Ամենափրկիչ վանքի, Դատի Բեկաց վանքի մանրամասն նկարագրությունները: Տարածաշրջանը հայտնի է նաև մատուռներով ու դրանց շուրջ հորինված ավանդազրույցներով. «Կիրանց կամ Մեջիդ քյանդ» գյուղի մոտ «Կաղնի խաչ» անվամբ մի մատուռ կա, որի մասին ասվել է, թե «Այդտեղ է ամփոփված Գարդման գավառի տիրակալ Խուրս իշխանը»⁷: Մատուռին կից, որն ի դեպ, ուխտատեղի էր, կար մի հինավուրց եկեղեցի: Ըստ մեկ այլ ավանդության. «Դա քրիստոնեություն ընդունած մի թուրքի գերեզման էր, որ նահատակվել է թուրքերից: Նահատակվելուց հետո հայերի և թուրքերի միջև վեճ է ծագել, թե ում ծիսակատարությամբ պետք է նրան ամփոփել: Վերջապես համաձայնել են. նախ մոլլան, ապա քահանան. հրամայել են նահատակին կանգնելու և միայն քահանայի հրամայած միջոցին ննջեցյալը կանգնել է, ուստի հայկական ծեսով են թաղել»⁸:

Բազմահարուստ մշակութային կոթողների առկայությունը վկայում է տեղավայրի ազգաբնակչության հայաշունչ կենսակերպի մասին: Ճանաչողական կարևորությամբ են պայմանավորված տարածաշրջանի տեղագրությանը վերաբերող տվյալների վկայակոչումները: Գանձակի գավառի տեղագրությունը ներկայացնելիս, բացի ճամփորդական նոթերից, Ե. Լալայանը կարևորել է նաև Բանանց գյուղի արժանահիշատակ Տեր Երվանդ քահանայի, գանձակեցի Հակոբ Վարժապետ Տեր-Հարությունյանի և Կար. Ղազարյանի ձեռագիր դիտողությունները: Ճանապարհորդության ընթացքում իբրև ուղեցույց միշտ ձեռքի տակ ունեցել է Մ. Բարխուդարյանցի «Արցախ» և Հասան Ջալալյանի «Ճանապարհորդություն» աշխատությունները: Նա օգտվել է նաև Ն. Ա. Աբելովի «Экономическое положение государственных крестьян Елисаветпольского уезда» և այլ աշխատություններից:

Ե. Լալայանի գրառումներում տեղ են գտել բուժիչ յուրահատկություններով օժտված մի շարք բուսատեսակների անվանումներ. հայերենին կից ներկայացված են նաև դրանց ռուսերեն և լատիներեն անվանաձևերը: Օր. Թանթրվենի (бузина, sambucus), փիփերթ (мальва, malva silvestris), ծառատեսակներից՝ լոբենի (липа, tiliaeuropica), թփերից՝

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 329:

⁷ Նույն տեղում, էջ 297:

⁸ Տե՛ս նույն տեղում:

ուզնի (боярышник, *ctaraegys*), զկոնի (мушмула, *mespilus germanica*), մասրենի (шиповник, *rosa canina*), մոշենի (ежевика, *rubus caesis*), թթենի (шелковица, *morus alba u morus nigra*)⁹:

Տարածաշրջանը հայտնի էր ոչ միայն բազմահարուստ բուսատեսակների առկայությամբ, այլև ջրառատ գետերով. «Ինճա չայր», «Կուրակ գետը» կամ «Ոսկանապատ գետը», «Արթենա ջուր» կամ «Բանանց գետը», «Ղոչղարա չայր», «Շամքորը», «Ջակիր չայր»¹⁰: Լճերից՝ «Գյոգ գյուղ» [այն իր անունը ստացել է ջրի կապույտ (գյոգ) գույնից]: «Աստծո ծովի» մասին ներկայացված է հետևյալ ավանդազրույցը. «Այդտեղ մի սպիտակ գոմեշ է եղել, որ յուր ձագի հետ, պոզերին մոմեր վառած դուրս է եկել լճից և արածել ափում: Գոմեշը՝ սուրբ համարելով, լիճն էլ «Աստծո ծով են կոչել»¹¹:

Ե. Լալայանի գրառումներում առկա են նաև լեռների, ձորերի, քարերի, ծառերի, աղբյուրների շուրջ հորինված ավանդազրույցներ: Ուշագրավ են աղբյուրների՝ հմայական գործությամբ օժտված լինելու մասին ներկայացված ավանդազրույցները: Բանանց գյուղի մոտ գտնվող «Պաքերի աղբյուրը» երիտասարդացնում է մարդուն և սեր ներշնչում, «Նահատակի աղբյուրը» փարատում է վիշտը, թախիծը, հոգեկան հիվանդությունը, Նոր Փիփ գյուղին մոտ գտնվող «Ոսկան նահատակին» աղբյուրը բուժում է համրությունը, խլությունը և կուրությունը¹²:

Տարածված էին նաև ժայռերի՝ բուժիչ հատկությամբ օժտված լինելու հավատալիքները: Էրբեջ գյուղի մոտ գտնվող, մեջտեղից ձեռքվածք ունեցող մի ահագին ժայռից կաթկաթ ջուր է կաթում: «Չիք չորեքշաբթի» օրը մոտակա գյուղերից ահագին բազմություն ուխտագնացության է մեկնում, մոմեր վառում ժայռին, տակից հող վերցնում և կաթկաթ թափվող ջուրը շաղախելով քսում մկնաստամի վրա, որ առողջանա¹³:

Ե. Լալայանը 8 ավանդազրույց է գրառել Չարդախյու գյուղի նշանավոր՝ «Թխկի ծառի», «Կաղնի խաչի», Գետաշենի «Չինար խաչի», Բրաջուր գյուղում «Բոշնի ծառի», Բուզլուղ գյուղում, Ս. Մինաս մատուռի մոտ գտնվող «Վիթխարի հացենիների», Բանանցի «Կաղնի խաչի» վերաբերյալ: Բլուրներով ու լեռներով, և անտառային բուսականությամբ բազմահարուստ վայրերում ապաստան են գտել վայրի կենդանիների տեսակներ. գարնան ավետաբեր սարյակները, արտույտները, ծիծեռնակները, ագռավները, կաքավներն ու բազում այլ կենդանիներ: Թռչուններից պաշտվում էր ծիծեռնակը. նրա մասին տարածված է հետևյալ ավանդազրույցը. «Նրան խնդրում էին, որ երեխաներին ճարտար խոսելու շնորհ պարգևի, որովհետև կարծում էին, որ նա մի ճարտար, քաղցրախոս երեխա է եղել: Խորթ մայրը, ատելով նրան, հիվանդ է ձևանում և պահանջում է ամուսնուց, որ այդ տղայի ճկույթը կտրի, տա իրեն, որ ուտի, առողջանա: Հայրը կտրել է տալիս ե-

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 280:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 264:

¹¹ Նույն տեղում, էջ 266:

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 418:

¹³ Տե՛ս նույն տեղում:

րեխայի ճկույթը (ծիծեռնը), ցավից երեխան մահանում է: Երբ ճկույթը տարել է կնոջը՝ հանկարծ ճկույթը ծիծեռնակ է դառել, թռչել՝ երգելով»:

Ծիծեռն էմ, հա ծիծեռնը,
Մորը կերած ծիծեռնն էմ,
Հորը մորթած ծիծեռնն էմ,
Թռել՝ ծիծեռնակ էմ դառել¹⁴:

Ավանդագրույցներ են ներկայացված նաև բուի, հոպոպի, մորեխի, շան, կատվի, արջի, կապիկի, ջորու մասին:

Չարագուշակ թռչուն է համարվել բուն: Երբ նա տան կտուրին երևում էր, տնեցիներին պատում էր թախիծ, չնայած այն ամենախիմաստուն թռչունն է համարվել. սկզբում նա նույնիսկ ընտանի է եղել, բայց հետո, երբ տեսել է մարգարեներին, վախեցել է, որ իրեն էլ կսպանեն, հեռացել է նրանցից և ապրել ավերակների մեջ: Երբ հարցրել են նրան, թե աշխարհում ի՞նչն է ավելի, շինությունն է՞ր, թե՞ ավերակները, նա պատասխանել է. «Ավերակները, որովհետև ժամանակին բոլոր շինություններն էլ ավերակներ պիտի դառնան»: Իսկ երբ հարցրել են՝ ովքե՞ր են ավելի, կանա՞յք, թե՞ տղամարդիկ, պատասխանել է. – կանայք, որովհետև կնոջ լսող տղամարդն էլ կին է»¹⁵:

Գրառումներում ներկայացված են բնական տարերքի և տիեզերական երևույթների՝ արևի, լուսնի, աստղերի, հարդագողի ճանապարհի, անձրևի, երաշտի, կարկտի, կայծակի մասին ավանդագրույցներ: «Ոգիների պաշտամունքը» խորագրի ներքո տեղ են գտել նաև չար ու բարի ոգիների, սատանաների, օրորոցագողի, հրեշի (մարդակերպ էակների, յոթգլխանի ուշեփի մասին ավանդագրույցներ): Արքավայրերից հիշատակվում են՝ Նահատակը, Իմամ-գադեն, Արթեն ճգնավորը: Ըստ «Պանտը կամ պանտայոնի» մասին ավանդագրույցի, «Պանտը կամ Պանտայոնը մի թուրք տղա է եղել, որ ընդունել է քրիստոնեություն և իր քրոջ հետ միասին փախել տնից: Թուրքերը հետևել են նրան և նահատակել այն լեռան վրա, որն այժմ նրա անունն է կրում, իսկ քրոջը դրել են մի պարկի մեջ և գլորել»¹⁶: Ըստ «Արթեն ճգնավորը» ավանդագրույցի, «Նա սարսափելի ցրտերին բարձրացել է իր անունը կրող լեռը և այնտեղ տանջել իրեն: Նրա գերեզմանը գտնվում է համանուն լեռան վրա և հրաշագործ է: Երաշտ ժամանակ գալիս քար են տանում այդտեղից, որ անձրև գա»¹⁷:

Կրակապաշտության հավատալիքներից հիշատակվում են «Կրակով երդվելը», կրակը վառելիս, հանգցնելիս «Հիսուս Քրիստոս ասելը», «Կրակի վրա չթթելը», գիշերները

¹⁴ Ե. Լ ա լ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 423–424:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 425–428:

¹⁶ Նույն տեղում, էջ 438:

¹⁷ Տե՛ս նույն տեղում:

լողանալիս կրակը գցելը ջրի մեջ՝ չարը խափանելու համար: Տարածված էր օջախի պաշտամունքը: Մեռնաջուրը օջախն են լցնում՝ ամենամաքուր տեղը համարելով այն: Օջախով երդվում, օրհնում և անիծում էին: Հարսանիքներին հարսը երկրպագելով հոր օջախը, նրանից մի քիչ մոխիր վերցնելով իր հետ տանում էր սկեսրանց տունը:

Ներքնտանեկան համակարգում սրբորեն են պահպանվել որոշակի ավանդույթների կենցաղավարման ներէթնիկ դրսևորումները: Հարսանեկան սովորություններն ու ծեսերն ուղեկցվել են դարերի ընթացքում միմյանց փոխանցված որոշակի արարողությունների պարտադիր իրականացմամբ: Հնագանդության ու խոհեմության կոչեր են հնչում հարսնացուին՝ հայրական տնից հանելիս մոր վերջին պատգամները. «Խի՞ ես լաց ըլում, մի բուռ մոխիր ես, ուրիշին ենք տալիս, պետք ա գնաս, ջուրն ենք քրցում, պետք ա սուս կենաս, կրակն ենք քրցում, պետք ա աչքերդ խփես, մեջն ընկնես: Վախիլ մի, քու հերն ու մերը անջիգյար չեն, քեզ ոչ ջուրը կրքրցեն, վեչ՝ կրակը: Բալա ջան, ուր էլ ըլիս, մորդ կաթը մտահան չանես: Քեզ պահել եմ, ցրտից ու կրակից ազատել, թե տան միջին, կտրի տակին, թե աչքիցս հեռու, թե աչքիս աղաքին, հազար ու մի խրատ եմ տվել, օրհնանք ու անեծք ասել: Այ որդի, անեծքս ջուրը տանի, օրհնանքս գլխիս գյու տա: Ղամի ըռեխը տան, սրի ծերովը ծակոտեն, գլխիդ մոխիր մաղեն, անունդ չկոտրես, միշտ հալալ կաթնակեր մնաս»¹⁸:

Հայրական օջախի հանդեպ սերն ու հարգանքը մշտարթուն պահելու առաքելությանը են պայմանավորված հոր կողմից՝ աղջկան ուղղված հետևյալ պատգամները. «Բալա ջան, իմ ամակը չմոռանաս, հորդ օջախին խեթ աչքով մտիկ չտաս: Աստված քեզ ջուխտ ձեռով քու տիրոջը բաշխի: Հիմիկվանից դենը քու տերը առաջ Աստոծն ա, եդնան՝ (փեսայի հոր անունն է տալիս)»: Հետևյալ աղոթքներով էլ հայրը վերջին հրաժեշտն է հղում աղջկան. «Կալիդ քամի ըլլի, ջաղացիդ նօբաթ ըլլի, ջրիդ հերթ ըլլի»¹⁹: Այսպիսին էր ավանդապաշտ ընտանիքում ձևավորված բարոյական նորմերով առաջնորդվելու հրամայականը:

Հարսին հայրական տնից ուղեկցելիս «Ղավալ գուռնան» նվագում էր «Տարան հա՛յ» եղանակը, իսկ չարաճճի մակարները հարսի մորը լացացնելու նպատակով կատարում էին հիշյալ երգը²⁰:

Քահանայի կամ տանուտերի առջև գուռնաչին նվերներ ստանալու ակնկալիքով դիմում է հարսանքավորներին. «Ա խալիսը, ցնճացեք, շատ գիշեր է անցկացել, ով ինչքան ուզում ա, թագվորի սիրուն տա: Դուք էլ տուն եք, աղջիկ, տղա ունեք. էս հացափոխի ա, էսօր էս տանը, էքուց՝ ձեր տանը»²¹: Չուռնաչիները, դավալները հանպատրաստից գանազան եղանակներ են հնարել և որևէ տեղավայրի, ձորի, սարի անուն դրել, քանի որ,

¹⁸ Տե՛ս նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում, էջ 354:

²⁰ Նույն տեղում:

²¹ Նույն տեղում, էջ 358:

ինչպես իրենք են ասում, այդ եղանակը նկարագրում ու պատկերացնում է հենց այդ տեղավայրը²²: Այսպես, բանանցեցի դավալ Թյունի որդի դավալ Ավագը հետևյալ անուններն է դրել յուր հնարած եղանակներին. «Զկնի ձորին», «Լալուկ քարին», «Գյոլի դրադին», «Պաքերի աղբյուրին» և այլն²³: Հարսանիքին մատուցվող ամենահարգի կերակուրը ծիսական կորկոտն էր համարվել: Այն հատուկ արարողակարգով էր մատուցվում հյուրերին: Երբ կաթսան հանում են թոնրից ու ներս տանում, նվագախումբը հոտընկայս նվագում է. «Տատի սըռին» ժողովրդական մեղեդին:

Ի դեպ, հարսանիքներում մատուցվող ծիսական կորկոտը նորաստեղծ ընտանիքում՝ ծլարձակող սերմի, հատիկի գաղափարի խորհրդանիշն է համարվել: Պատահական չէր, որ այն եփվում էր թոնրում: Թոնիրը սուրբ է համարվել. այն եկեղեցուն հավասար է դասվել: Թոնրի շուրջ կնունք ու պսակ է արարվել, ինչպես եկեղեցում²⁴:

Առաջնեկի և նրա հաջորդող աղջիկ երեխաների ծնունդը, սակայն խաթարում էր ընտանիքի անդորրը: Սկեսուրի կողմից հարսը ենթարկվում էր անեծքների. «Ձահել տղիս օրը սևացրիք աղջկերք բերելով. ջինսդ կտրվի»²⁵: Ազգական կանայք գնում էին ոչ թե աչքալուսանք տալու, այլ մխիթարում էին հետևյալ խոսքերով. «Բան չկա, աղջիկ բերողը տղա էլ կբերի. Հերն ու մերը սաղ ըլին, հրլը ով ա գիտում, դրա ըռաջին շատ չար ու բարի կա. Ծաղիկ, կարմրուկ ... ասած ա կալովը պիրես, խախալով (մեծ մադ.– Ս. Վ.) վեր օնիս»: Աղջիկ երեխայի նկատմամբ նման վերաբերմունքը հետևյալ առած ասացվածքներով ու բանաձև ընդհանրացումներով են պայմանավորել. «Աղջիկը ուրիշի ապրանք ա, դրսի պատ ա, իսկ արու երեխան տան սյունն ա, ծերության նեցուկ, Օջախը վառ պահող, Ծնողաց հիշատակը վառ պահող, նրանց գերեզմանը օրհնել տվող»²⁶:

Թաղման ծիսակարգում տարածված էին սգերգերի կատարումները: Գանձակի գավառում կային ողբասաց կանայք, որոնք հանպատրաստից ստեղծագործելու կարողությամբ էին օժտված: Սգերգերում տեղ են գտել հատկապես հայ կենցաղին բնորոշ ողբասացների կատարողական ավանդույթներն ու նրանց հուզաշխարհի յուրահատուկ դրսևորումները: Սգերգերն իրենց մեջ ներառում են ժողովրդական բանավեպերն ու բնորոշ ոճական նրբերանգներ ու լեզվական բազմիմաստ արտահայտչամիջոցներ: Թաղման ծիսակարգում յուրաքանչյուր արարողակարգ ուղեկցվում էր ծիսական որոշակի գործողությունների պարտադիր կատարմամբ: Ստորև ներկայացնում ենք հանգուցային լողացնելիս նրան ուղղված հետևյալ օրհնանք-բարեմաղթանքները.

Քարդ քաղած ինի,

²² Տե՛ս նույն տեղում, էջ 377:

²³ Տե՛ս նույն տեղում:

²⁴ Մ. Աբեղյան. Երկեր, հ. Է, Երևան, 1975, էջ 15:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Ե. Լալայան. նշվ. աշխ., էջ 377:

Հողդ մաղած ինի,
Դատաստանդ քաղցր ընի,
Գնալի ճանապարհդ բարի ընի,
Աղոթքդ տանդ վրա ընի,
Մնացածները բարի ինին,
Դու էլ բարի մեռել ընիս,
Զմոռանան քե՜²⁷:

Որդեկորույս մոր ողբը՝ որդու հանդեպ տաճած անսահման սիրո, միաժամանակ խոր վշտի ու կարոտի, քնարական վերապրումի մի յուրատիպ դրսևորում է.

Բալասանի ծաղիկ, որդի ջան,
Խորասանի ծաղիկ, որդի ջան,
Ատամները ջավահիր, որդի ջան,
Իմ խունջիկ-մունջիկ, որդի ջան,
Միեռ ետ իմ աչքերը խվարի քե տեսնալավ,
Իմ կոները չորանան քե պահելավ,
Իմ աստղը ծկած, որդի ջան,
Իմ ծաղիկը ճլորած, որդի ջան,
Իմ լեզին կըրճըցրած, որդի ջան,
Իմ թագա-մագա, որդի ջան²⁸:

Սկեսուրի՝ տան գլխավորի մահը հարսի կողմից ցավագին է ընդունվում: Տան գլխավորի պարտականություններն իր ուսերին կրելու մտահոգությունները նա արտահայտում է հետևյալ սգերգում.

Իմ նանի,
Իմ տանը սարգյար²⁹, նանի,
Իմ տանը պլանի³⁰, նանի,
Իմ դռան դուփուր³¹, նանի,
Իմ տաշտի մեզար³², նանի,
Ինձ թողել ես, թոռն ես քյինում³³.

²⁷ Նույն տեղում, էջ 409:

²⁸ Նույն տեղում, էջ 411:

²⁹ Մարգյար – պաշտպան:

³⁰ Պլանի – բանալի:

³¹ Դուփուր – կողպեք:

³² Մեզար – ծածկոց:

Ես եկել եմ քու փեշը բռնել,
 Ասում ես իմ տղան քեզ կպահի.
 Էն ո՞նց կպահի.
 Տանը մեծը քյինա,
 Ահը քյինա, դողը քյինա.
 Ուրտեղ քյինամ՝
 Էնտեղ կմնամ,
 Դուռը բաց կմնա,
 Տունը անտեր կմնա,
 Հավերը մոխիրը կքանդին,
 Շները պուլերը³⁴ կտանեն:

Ե. Լալայանի գրառումներում որոշակի տեղ են գրավում վիճակի երգերը, սույն ժողովածուում նա հրատարակել է 170 միավոր վիճակի երգ³⁵: Երգերի տողատակում նա ներկայացնում է գրառումների վերաբերյալ հետևյալ վկայությունը. «Բացի իմ հավաքածուներից, իմ խնդրանքով վիճակի երգեր հավաքեցին նաև Ս. Հակոբյանը, Գորգյանը, Միրիմանյանը, Մ. Ենգիբարյանը, Մինասյանը, Հ. Թումանյանը (մոտ հազար հատ): Այս բոլորը միմյանց հետ համեմատեցի, ընտրելագույները ընտրեցի, ապա խնդրեցի Մ. Մամիկոնյանին, որ շատ լավ գիտի տեղի բարբառը, աչքի անցկացնել և շտկումներ կատարել: Շնորհակալություն եմ հայտնում բոլոր վերոհիշյալ պարոններին»³⁶:

Գանձակցիները սրբորեն են պահպանել հայեցի կենսակերպը, դարերի խորքից իրենց փոխանցված ծեսերը, տոները, ավանդույթները: Նշանավոր տոներից նշել են՝ «Նոր տարին», «Ծնունդն ու մկրտությունը», «Քրիստոսի տոնը», «Սուրբ Սարգսի տոնը», «Տյառննդառաջը», «Միջունքը», «Ծաղկագարդը», «Չարչարանանց շաբաթը», «Չիք չորեքշաբթին», «Ավագ հինգշաբթին», «Ս. Վարդավառի տոնը»: Այս ամենը վկայում է, որ Գանձակի հայ բնակչությունն առաջնորդվել է հիմնականում ժողովրդի կողմից՝ դարերի ընթացքում արմատավորված և միմյանց փոխանցված հոգևոր մշակութային կացութաձևի պարտադիր օրենքներով:

Ժամանակին Գանձակում իրականացվել էր այլեթնիկ հանրության որոշակի խմբերի ներգաղթ: Մասնավորապես, գերմանացիների ու դուխաբորների (մալականների) համար այն գաղթավայր է համարվել: Գերմանացիների գաղութներից նշանավոր էին Ելենենդորֆն ու Աննենֆելդը: Հատկապես գերմանացիներով բնակեցված Ելենենդորֆի բնակչությունն իրենց աշխատասիրությամբ, հոգևոր և նյութական արժեքների հանդեպ

³³ Թոռն ես քյինում – ուր ես գնում:

³⁴ Պուլերը – խմորի գունդ:

³⁵ Ե. Լալայան. նշվ. աշխ., էջ 451:

³⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 473:

ցուցաբերած բացառիկ վերաբերմունքով մի առանձին վեհություն են հաղորդել գաղութին՝ կառուցելով գոթական ոճով, սրբատաշ կարմիր քարից եկեղեցի, պետական երկդասյա, երկսեռ դպրոց, երկհարկանի ու եռահարկ տներ՝ ընդարձակ բանջարանոցներով: Հիշյալ տարածքում բնակություն են հաստատել հայերը (160 հոգի), երկու տուն ռուս և երկու տուն՝ թուրք: Վերոհիշյալ եկեղեցում հայերն ունեին շարժական խորան մի դահլիճում, թեև իրավունք չունեին պատարագ մատուցելու: Նրանց տրված էր միայն ժամասացության այլ ծիսակատարություններ կատարելու իրավունք և Աննենֆելդը չունեի Ելենենդորֆի շքեղությունն ու առաջադիմությունը. պատճառը կենտրոնից հեռու գտնվելն էր:

Գանձակի գավառում էին գտնվում դուխաբորների հետևյալ գյուղերը. 1. Սլավյանկան, Նովո-Գորոլոյեն (Արթավա), 2. Նովո-Սպասկոյեն, 3. Նովո Տրոիցկոյեն (Գյունայ): Ըստ ավանդության՝ հնում Սլավյանկա գյուղը հայաբնակ է եղել և կրել է Վարդանապատ անունը: Թուրքերն այն կոչում էին Ենկիջա բազար: Մալականների գյուղերից Նովո-Սարատովկա գյուղը կոչվել է Փնտիլու (Կաղնուտ): Նովո Բվանովկա գյուղում էր գտնվում մի եկեղեցու ավերակ, որը կրում էր «Սպիտակ եկեղեցի» անունը: Հիշյալ գյուղը, ի դեպ, շատ անգամ կոչվել է «Աղբիլիսա» («Սպիտակ եկեղեցի»)՝³⁷:

Նա անդրադարձել է աղանդավոր մալականների հիմնադիր Միսենն Ուկլեին, որը բնակվել է Տամբովի նահանգի Բորիսոգլեբսկի գավառում: Ի դեպ, այս աղանդն առաջ է եկել դուխաբորների աղանդից: «Մալական» անվանումը վերագրվել է հիշյալ աղանդին 1765 թ. Տամբովի հոգևոր կոնսիստորիայի կողմից՝ պատճառաբանելով, որ աղանդավորները պասին՝ կաթ են խմել՝³⁸: Վերջիններս, սակայն, իրենց հոգևոր քրիստոնյաներ են անվանել և «մալական» անվանումը պայմանավորել են նրանով, որ իրենց ընդունած վարդապետությունն այն բանավոր կաթն է, որի մասին խոսվում է Ս. գրքի մեջ: Ե. Լալայանն անդրադարձել է նաև նրանց կյանքի ու կենցաղի տարբեր դրսևորումներին. բնակարանի կահավորմանը, հանդերձանքին, տղամարդկանց և կանանց հագ ու կապին, հարսանեկան սովորություններին, վարք ու բարքին, ծննդաբերությանը, թաղման ծիսակարգին: Ի դեպ, ազգագրագետը, անձնական դիտարկումներից բացի, օգտվել է նաև հետևյալ աշխատություններից. Юзов. ,Русские диссиденты, староверы и духовные христиане; Дангельштедт. ,Кавказские сектанты в их семейном и религиозном быту», ինչպես և ,Кавказе լրագրի 1858, 1864, 1876 և 1897 թ. համարներից՝³⁹:

Ե. Լալայանի «Գանձակի գավառ» ժողովածուն իր սկզբնաղբյուրային կարևորությամբ եզակի երևույթ է:

³⁷ Նույն տեղում, էջ 474–486:

³⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 474:

³⁹ Տե՛ս նույն տեղում:

ФОЛЬКЛОРНОЕ НАСЛЕДИЕ ГАНДЗАКА В
ЗАПИСЯХ ЕРВАНДА ЛАЛАЯНА

СВЕТЛАНА ВАРДАНЯН

Р е з ю м е

Записи Ерванда Лалаяна «Гандзак: материалы для будущего исследования» – весомый вклад в область армянской этнографии и фольклора. Они не потеряли своего значения до наших дней. Это – достоверные источники для освещения многих историко-культурных вопросов. Их злободневность возрастает в связи с тем, что армяне, в XX в. лишены права проживания на родине турками-азерами, расселившись по всему миру, без сомнения, со временем забудут многие историко-культурные ценности, переданные им из глубины веков, при этом сохранив чувство любви и тоски по родине.

FOLKLORIC HERITAGE OF GANDZAK IN THE RECORDS
OF YERVAND LALAYAN

SVETLANA VARDANYAN

S u m m a r y

The records by Yervand Lalayan "Gandzak: Materials for the Further Investigation" is a significant account in the field of the Armenian ethnography and folklore. They haven't lost their modernity and significance until our days. These are reliable sources for elucidation of multiple historical-cultural items. Their importance is even amplified in our days, for the reason, that Armenian population was in the 20th century violently deprived of its inhabitation by Turk-Azeris, compelled to settle around the world, and people certainly will put many historical-cultural values transmitted to them from the depth of centuries out of mind, never losing the sense of love to homeland and homesickness.